ՊԱՐՏԱԴՐՈՒՄ Է ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեանը պարտադրում է բռնի տեղահանութիւն:

Աշխարհի նոր կարգը արդեօք պահանջո՞ւմ է, որ Միխայիլ Գորբաչովը մի քիչ կարգ ու կանոն հաստատի իր իսկ պետութեան մէջ: Այն ժամանակ կարելի պիտի լինէր հասկանալ, թէ ինչո՛ւ ԽՍՀՄ նախագահը Արեւմուտքի մէջ իր հռչակը վտանգի է ենթարկում «կարգի հրաւիրելով» Հայաստանի Հանրապետութիւնը: Անընդունելի ձեւերո՞վ է լինում այդ մէկը: Հիմակուհիմայ անստուգելի է: Ադրբեջանի տարածքում մնկուսացած Լեռնային Ղարաբաղի հայկական մարզ մուտքը արգելուել է օտար թղթակիցներին: Այժմ այնտեղ տեղի ունեցող դէպքերը հաւաստիօրէն նկարագրելու փոխարէն, կարող ենք գնահատել նրանց հետեւանքները հայկական խնձորեսկ սահմանային կէտում, որը գտնուում է ադրբեջանական Կուբալու շրջանի դիմաց: «Էքսպրես»ի յատուկ թղթակիցը Երկուշաբթի, Մայիսի 20ին այնտեղ տեսաւ 1000ից աւել ծերերի, կանանց եւ երեխաների, որոնք 5 օրից ի վեր սպասում էին, որ դռները բացուեն եւ իրենց երդիկ շնորհուի: Կարելի է կասկածի տակ առնել այս մարդկանց պատմածների ճշմարտացիութիւնը, որը ի յայտ է բերում ազերիների կողմից քաջալերուած եւ նրանց օգնութեամբ խորհրդային զօրքի կատարած վայրագութիւնները հայկական գիւղերում: Կարելի է չհաւատալ, որ ընպիտակ թղթի վրայ բռնի ստորագրութիւններ են խլուած, որոնք ապագայում Հայաստան տեղափոխուելու պաշտօնական դիմումների են վերածուելու: Բայց ի՞նչ ասել այս մարդկանց մասին, որոնց Հայաստանի Հանրապետութիւնը ամենայն տրամաբանութեամբ մերժում է հիւրընկալել, կատարուած իրողութեան առջեւ տեղի տալով, չքաջալերելու համար այն, ինչը որ նման է Լեռնային Ղարաբաղի պարպումին: Շաբաթ, Մայիսի 18ին, սահմանային կէտի մօտ, ազերի երեսփոխան Թուրժումշուտ Նուրիեւը արեւմտեան լրագրողներին եւ դիւանագէտներին յայտարարում էր. «Շուտով Տէր Պետրոսեանը ծնկաչոք պիտի խնդրի միութենական նոր Պայմանագիրը ստորագրել»: Իրօք որ, հակառակ Ադրբեջանին, Հայաստանը բացայայտօրէն -եւ շատ օրինականօրէն -բռնել է Միխայիլ Գորբաչովի սահմանած անկախութեան ճամփան: Բայց ո՞վ պիտի վճարի այդ ուղու գինը:

Ժակ Ռիշար՝
Երեւանից Ի.Գոթիէի հետ